

Հաստատում են՝

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի  
ռեկտոր, մ. գ. դ. \_\_\_\_\_ Ա. Ծատուրյան



20 փետրվարի, 2026 թ.

Առաջատար կազմակերպության՝ Մեծր Սուրենի Քումունցի՝ «Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարը» ատենախոսության մասին՝ ներկայացված բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար՝ Ժ.02.01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ:

Կարծիքն ընդունվել է ՎՊՀ-ի հայոց լեզվի և գրականության ամբիոնի նիստում (19.02.2026 թ., արձ. թիվ 10) բաց քվեարկությամբ: Նիստին մասնակցում էին ամբիոնի անդամներից 11-ը՝ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բ. գ. թ., դոցենտ Հ. Բաբոտյանը, բ. գ. թ., դոցենտ Ա. Սանթրյանը, բ. գ. թ., դոցենտ Դ. Գյուլգառայանը, բ. գ. թ., դոցենտ Ա. Պողոսյանը, բ. գ. թ., դոցենտ Շ. Ղուկասյանը, բ. գ. թ., դոցենտ Վ. Փիլոյանը, բ. գ. թ., դոցենտ Գ. Հովիվյանը, բ. գ. թ., դոցենտ Գ. Պապյանը, բ. գ. թ., դոցենտ Տ. Դանիելյանը, բ. գ. թ., ք. Ղազարյանը, բ. գ. թ., դոցենտ Հ. Հարությունյանը:

Ելույթ ունեցան ՀԼԳ ամբիոնի վարիչ Հ. Բաբոտյանը, բ. գ. թ., դոցենտ Շ. Ղուկասյանը, բ. գ. թ., դոցենտ Ա. Պողոսյանը, բ. գ. թ., դոցենտ Դ. Գյուլգառայանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսությունը նվիրված է Արցախ-Սյունիքի բարբառային բառապաշարի ուսումնասիրությանը: Աշխատանքի թեման հույժ արդիական է՝ հաշվի առնելով 2023 թ. -ից հետո ձևավորված աշխարհաքաղաքական փոփոխությունները, ինչի հետևանքով վտանգվել է Արցախի բարբառը՝ որպես ոչ նյութական մշակութային ժառանգություն: Արցախի հայաթափումից հետո ատենախոսությունը ստանում է բացառիկ փաստագրական արժեք:

Աշխատանքը Արցախ-Սյունիք բարբառախմբի համակարգված քննություն է. հեղինակը բառապաշարը դիտարկում է ըստ ծագումնաբանական շերտերի և թեմատիկ խմբերի և նկատում, որ Արցախ-Սյունիքի լեռնային ու մեկուսի դիրքը նպաստել է հայերենի հնագույն շերտերի և հնդեվրոպական արմատների պահպանմանը, որոնք այլ բարբառներում և գրական լեզվում դուրս են մղվել:

Աշխատանքում կատարվել է խորքային բառաքննություն՝ համեմատելով բարբառային ձևերը հնդեվրոպական նախալեզվի վերականգնված ձևերի հետ: Մանրամասն վերլուծված են նաև փոխառությունները՝ հստակ տարանջատելով հին շրջանի (գրաբարի միջոցով անցած) և ուշ շրջանի բանավոր փոխառությունները:

Հեղինակը կիրառում է միջգիտակարգային մոտեցում՝ համադրելով լեզվաբանական տվյալները պատմական, ազգագրական և հնագիտական տվյալների հետ: Կարծում ենք՝ ատենախոսությունն ունի թե՛ տեսական (լեզվի պատմության քննություն), թե՛ գործնական (բարբառային նյութի փաստագրում և արխիվացում) նշանակություն:

Պարագայական իմաստ ունեցող բառաշերտերի քննությունը՝ տեղի, ժամանակի, ձևի ու չափի հատույթներով, հիմնավոր է, գիտականորեն փաստարկված:

Ցանկացած լեզվի անգնահատելի հարստությունն են դարձվածային միավորները: Վերջիններս, ունենալով ժողովրդական ծագում, առանձին հմայք են տալիս տվյալ լեզվին և հարստացնում այն: Դարձվածքներով հարուստ է նաև Արցախ–Սյունիքի բարբառային բառապաշարը: Ինչպես նշում է ատենախոսը. «Բարբառային տարածքի դարձվածքների շտեմարան է Ա. Սարգսյանի և Շ. Մինասյանի համահեղինակած «Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարանը» (2017)», բավականին ստվար մի աշխատություն՝ բաղկացած 568 էջից (էջ 23-24): Նրանում ընդգրկված դարձվածային միավորների թիվը հասնում է մի քանի հազարի:

Ատենախոսն իր աշխատանքում անդրադառնում է Արցախ–Սյունիքի բարբառային բառապաշարում ընդգրկված դարձվածքներին, ներկայացնում դարձվածային զուգահեռներ, ինչպես՝ *կօղքը հաստ* և *դօլը հաստ* (էջ 191), *ունկն հարկանել* և *ա՞նջու՞կը կանչել* (էջ 233) և այլն:

Հատկապես հետաքրքիր են *փափ*, *մուր*, *ոսկի*, *ժանգ* բաղադրիչներով կապակցությունները, ինչպես՝ *փափան կրքած* «1. ցածրահասակ, 2. վախվորած, աչքի չընկած», *փափին հըվըսըրդեցնել* «1. Գետնին հավասարեցնել, 2. քանդելով հավասարեցնել, *փափան կէնալ*, «1. ընկնել, 2. Գետնին պռոկել, 2. մեռնել, 3. անեծք», *փափան կըրտել* «ծանր բան գետնից բարձրացնել», *փափան յերկըլած* «1. անարժեք, 2. գտած, 3. հավելյալ շահ», *փափան փո՞ւս յէկած* «1. բերք ու բարիք, 2. ընդհանրապես ուտելի բույսեր, 3. փոխ.՝ գունատ», *կըրկյա՞մուր անել* «լողանալ», *կերկյա՞մուրը օրփաթան ճելլի (շո՞ւր) յէկավ* «նախատեսածից մի բան շուտ լինել», *վէսկի ծեռքեր*, *վէսկի մաններ*, *վէսկավ խաղ անել*, *վէսկի սարեր խօսք փալ*, *վէսկին*

**վէսկավ վըսկըճիրէլ, վէսկին ցէխի մէջին ալ ա պլստրապին տամ, վէսկի անում, վէսկի մարդ, ժա՞նգ ու ժո՞նգը քիցէլ (կապէլ, դնել), ժա՞նգը կըպչէլ (թըխէլ) «բոյսերի մի տեսակ հիվանդություն», ժա՞նգը իրէսան կըցած, ժա՞նգը թափէլ, ժանգը յէր ածէլ, ժանգէրը խառնէլ, ժանգ փըռնէլ, ժանգը օտէլ և այլն: (էջ 327-331)**

Որպես դիտողություն նշենք, որ հեղինակի ներկայացրած քսաներեք թեմատիկ խմբերից միայն հինգում են հիշատակվում դարձվածային կապակցությունները: Մյուսներում դրանց մասին ոչինչ չի խոսվում, չնայած համոզված ենք, որ այդպիսիները բազմաթիվ են:

Կատարված աշխատանքը բարձր գնահատելով հանդերձ՝ նշվեց հետևյալը:

1. Պետք է նշել, որ աշխատանքում կան որոշ դիտարկումներ, որոնք հեղինակը ներկայացնում է որպես բարդ և հետագա քննություն պահանջող խնդիրներ:

2. Աշխատանքը բաժանված է գլուխների՝ ըստ բառապաշարի ծագումնաբանական շերտերի: Յուրաքանչյուր գլխում կատարվում է թեմատիկ դասակարգում: Սա ստեղծում է որոշակի կառուցվածքային բարդություն. այսպես, նույն թեմատիկ խումբը կարող է հանդիպել բոլոր գլուխներում՝ ըստ ծագման: Մեր կարծիքով սա տվյալ խնդրի ամբողջական պատկերը տեսնելու տեսակետից առաջացնում է խնդիր. դժվարանում է նյութի ընկալումը՝ որպես մեկ միասնական համակարգի:

3. Աշխատանքում նկատելի է թեմատիկ խմբերի անհամամասնություն, ինչը խախտում է աշխատանքի կառուցվածքային համամասնությունը:

4. Երբեմն բավարար չափով շեշտադրված չեն ներբարբառային տարբերությունները: Արցախի և Սյունիքի խոսվածքների յուրահատկությունները հաճախ ձուլվում են ընդհանուր վերլուծության մեջ՝ ստվերելով տեղային առանձնահատկությունները: Սա զարմանալի է, քանի որ էջ 40-ում հեղինակը նշում է, որ խորհրդային շրջանից ավելի է խորացել Արցախի և Սյունիքի բարբառների տարբերությունը:

5. Պարզաբանման կարիք ունի էջ 12-ի հղում 32-ի տրամաբանությունը:

6. Էջ 22-ում խոսելով Ջահուկյանի՝ նախագրային հայերենի պատմությանը նվիրված աշխատության մասին՝ գրում է, որ ներկայացված են հնագույն փոխառությունները գրաբարյան շրջանի իրանական, սեմական և այլ լեզուներից: Սակայն Ջահուկյանի նշած փոխառությունները ոչ թե գրաբարյան, այլ նախագրային շրջանին են վերաբերում:

